

ԱՌՈՂՋԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՀԱՍԱԿԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՆՈՒՑՄԱՆ ՎՐԱ

Հարությունյան Ս.Ա.¹, Պողոսյան Կ.Պ.¹, Սարիբեկյան Կ.Ս.²,
Ղազարյան Ա.Է.²

¹ Երևանի Մ. Զեքուրցու անվ. մանկաբուժության և մանկական վիրաբուժության թիվ 2 ամբիոն,
Երևան, Հայաստան

Երևանի Մ. Զեքուրցու անվ. «Մուրացան» համալսարանական հիվանդանոց, Երևան, Հայաստան,
² ՀՀ առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան

Վաղ հասակի երեխաների սնուցման գործելակերպի բարելավման նպատակով 1999 թ. ՀՀ առողջապահության նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը սկսեցին հանրապետության ծննդատներում ԱՀԿ/ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Մանկանը բարեկամ ծննդատներ» նախաձեռնության ներդրումը:

2003 թ. սկսվեց նոր՝ «Մանկանը բարեկամ պոլիկլինիկաներ» նախաձեռնությունը, որը «Մանկանը բարեկամ ծննդատներ» նախաձեռնության ձևափոխված տարբերակն է:

Վերոհիշյալ նախաձեռնությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով, 2008 թ. առողջապահության նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը իրականացրել են համեմատական հետազոտություն՝ «Մանկանը բարեկամ» և այդ կոչումը չունեցող բուժաստատություններում, համեմատելով սնուցմանն առնչվող գործելակերպերը, կրծքով սնուցման ցուցանիշները, մայրերի և բուժաշխատողների գիտելիքները:

Ըստ հետազոտության արդյունքների, «Մանկանը բարեկամ» պոլիկլինիկաներում կրծքով սնուցման ցուցանիշները զգալի բարձր են: Նախաձեռնության ուսուցում անցած մայրերը երեխաների սնուցմանն առնչվող հարցերին երկու անգամ ավելի հաճախ են ճիշտ պատասխանում և ավելի հաճախ են իրենց երեխաներին միմիայն կրծքով կերակրում:

Վաղ մաշկային շփումը նույն հաճախականությամբ էր իրականացվել «Մանկանը բարեկամ» և կոչում չունեցող ծննդատներում: Նախալակտացիոն սնուցման և շշերի ու ծծակների կիրառման հաճախականությունը «Մանկանը բարեկամ» ծննդատներում ավելի ցածր էր: «Մանկանը բարեկամ» բուժաստատությունների անձնակազմը, վաղ հասակի երեխաների սնուցման վերաբերյալ հարցերին ավելի հաճախ է ճիշտ պատասխանել, ինչը բացատրվում է «Մանկանը բարեկամ» հաստատությունների գրեթե ողջ անձնակազմի սնուցման վերաբերյալ սեմինարներին մասնակցությամբ:

Հետազոտության արդյունքները վկայում են նաև այն մասին, որ բացառապես ու գերազանցապես կրծքով կերակրվող երեխաները, արհեստական սննդով կերակրվողների համեմատ ավելի հազվադեպ են հիվանդանում սուր շնչառական հիվանդություններով: Այսպիսով, հետազոտության արդյունքները հաստատում են «Մանկանը բարեկամ» նախաձեռնությունների ներդրման արդյունավետությունը: